



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ա Ր Ա Ն
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ձ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
Հեռ. /0264/2-34-31, Ֆաքս /0264/2-34-31
Կայք gegharkunik.mtaes.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N _____

-----2017թ.

<< Հետաքննող լրագրողներ >>
ՀԿ-ի << Հետք>> թերթի լրագրող
Պարոն Գրիշա Բալասանյանին

Հարգելի՛ պարոն Բալասանյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետին հասցեագրված Ձեր 06.09.2017թ. հարցմանն ի պատասխան հայտնում եմ, որ

1.Գեղարքունիքի մարզի համայնքների ավագանու որոշումները համայնքների կողմից առաքվում են մարզպետարան, այնուհետև մարզպետի կողմից որոշման մեկ օրինակը մակագրվում է մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, և տեղադրում մարզպետարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

2.Մարզպետարանը ավագանու որոշումները հրապարակելու ուղղությամբ համայնքներում իրականացնում է իրավական հսկողություն (<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք հոդ.95) և համայնքների ղեկավարներին առաջարկվում է ապահովվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջը:

3. Մարզի որոշ համայնքներում ավագանու որոշումների հրապարակման հետ կապված համայնքները խնդիրներ են ունեցել՝ կապված տեխնիկական և կապի միջոցների հետ: Զուլաքար համայնքում բացի տեխնիկական միջոցներից, եղել է խնդիր համապատասխան համայնքային ծառայողի հետ կապված, ով թերացել է իր աշխատանքում և համայնքի ղեկավարի կողմից ենթարկվել է կարգապահական տույժի:

4.Մարզպետարանի կողմից պարբերաբար համայնքների ղեկավարներին ուղարկվում են շրջաբերականներ, մարզխորհրդի նիստերին և համայնքների ղեկավարների մասնակցությամբ հրավիրված այլ հանդիպումներին տեղեկացվում է նրանց՝ ավագանու որոշումները ժամանակին մարզպետարան առաքելու վերաբերյալ:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզի բոլոր համայնքներում օրենքով սահմանված ժամկետներում հրավիրվել են ավագանու նիստեր և ընդունվել համապատասխան որոշումներ, սակայն որոշ համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարների անփութության պատճառով, ավագանու ընդունած որոշումները մարզպետարան չեն առաքվել: Քանի, որ համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարները համայնքային ծառայողներ են, ապա նրանց կարգապահական տույժի կարող են ենթարկել միայն համայնքների ղեկավարները:

6. ՀՀ Գեղարքունիքի 2017թ. Օգոստոսի 10-ի մարզխորհրդի նիստին մարզպետի կողմից համանքների ղեկավարներին առաջարկվել է՝ ավագանու որոշումները ժամանակին առաքել մարզպետարան:

Հարգանքով՝



ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ